ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/42, 20.06.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Ալավերդու ԲԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում,
2. Պարտավորեցնել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին փոփոխելու թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը՝ այնտեղից հեռացնելով «...գրանցված Եվրոմիության երկրներում...» պահանջը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բաֆֆու 33/7

2) Պատվիրատուի անվանումը՝ <<Ալավերդու ԲԿ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 20

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ N մ-27335-2019
1 «18» 06 2019 թ.

3) Գնանշման հարցման ծածկագիրը՝ «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1»

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Ալավերդու ԲԿ>> ՓԲԸ -ն << Բժշկական նշանակության ապրանքների >> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. հունիսի 10-ի թիվ 4 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-2), որի հրավերի թիվ 70, 95, 96, 97, 98 և 99-րդ չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ախտահանիչ նյութեր, որոնց համար <<անվանումը>> սյունակներում գրված է <<....գրանցված Եվրոմիության երկրներում....>> պահանջը (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-4):

Այդ պահանջը խտրական է, սահմանափակում է ԵԱՏՄ արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ գնանշման հարցմանը, քանի որ ԵԱՏՄ արտադրողների ապրանքների համար պարտադիր պայմանը ԵԱՏՄ Մաքսային Միության Պետական գրանցման վկայականի առկայության պահանջն է, ինչը բացակայում է Պատվիրատուի պահանջների ցանկում, դրանով իսկ չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Ալավերդու ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարությունը և «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. հունիսի 10-ի թիվ 4 որոշմամբ հաստատված՝ << Բժշկական նշանակության ապրանքների >> ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերը՝ հրավերի թիվ 70, 95, 96, 97, 98 և 99-րդ չափաբաժինների մասով, և դիմելով ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին խնդրում է՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշում՝ հրավերի թիվ 70, 95, 96, 97, 98 և 99-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև պարտավորեցնել՝ փոփոխելու թիվ 70, 95, 96, 97, 98 և 99-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, այնտեղից հեռացնելով <<....գրանցված Եվրոմիության երկրներում....>> պահանջը:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ <<Ալավերդու ԲԿ>> ՓԲԸ-ի «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերի <<անվանումը>> սյունակներում գրված <<....գրանցված Եվրոմիության երկրներում....>> պահանջը՝

ա) չիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ հակասելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պահանջներին;

բ) չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չեն խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պահանջներին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 6 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սմբատ Բալասանյան

18 հունիսի 2019թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45